

ՀԱՅԿ. ՀՐ. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՔԱՂԲԱԺԻՆ

Գրադատները բոլոր յերկրներն, միացեր.

338.98 (47)

Ա-22

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԶԱՆՐԱՊԵՏՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

(ԹԵԶԻՍՆԵՐ)

Կազմեց՝ Ն. ԱԶՍՏԵՄԼ.

Յերևան
Զինվորական տպարան
1923 թ.


338 07.2013

32134

2802-10

12-22

1. Դեռ համաշխարհային պատերազմի նախորդա-
կին կապիտալիստական յերկրների շարքում իր տըն-
տեսութունով Ռուսաստանը վերջին տեղերից մեկն
էր բռնում: Իր քաղաքացիների տարեկան յեկամտի
չափով (մարդագլուխ/20 ռ.) նա հինգ անգամ ավելի
ցած էր կանգնած, քան Գերմանիան և Ֆրանսիան, և
յոթ անգամ ավելի ցած, քան Անգլիան. իսկ իր ընդ-
հանուր հարստությունով (շնչին համեմատ էր 400 ռ.)
մոտ յոթ անգամ ավելի ցած էր կանգնած, քան ա-
ռաջնակարգ կապիտալիստական յերկրները: Կապի-
տալներով աղքատ և տեխնիքապես ցած աստիճանի
վրա դանդաղելով, Ռուսաստանը չէր կարողանում մշա-
կել ու ոգտագործել իր ահագին բնական հարստու-
թյունները: Գլխավորապես գյուղատնտեսական յերկիր
լինելով, նա իր հողից 3—4 անգամ պակաս բերք էր
ստանում, քան կապիտալիստական յերկրները, ուր մի
դեսյատինը մոտ 140—200 փութ բերք է տալիս:
Նույն իսկ տնային կենդանիներով Ռուսաստանի գյու-
ղացին պակաս էր ապահովված, քան կապիտալիստա-
կան յերկրների գյուղացիութունը: Տնտեսական հե-
տամնացության այս ընդհանուր պայմաններում Ռու-
սաստանի քաղաքացիները վոչ միայն պակաս շաքար,
միս, թեյ, կակաո, մանուֆակտուրա և տասնյակ այլ
մթերք էյին սպառում, քան կապիտալիստական յերկր-
ների քաղաքացիները, այլ չնայած, վոր հացը Ռուսաս-
տանի քաղաքացիների մեծամասնության համար զըլ-
խավոր և հաճախ միակ կերակուրն էր կաղծում, հաց
անգամ նրանք մոտ 2 փութ պակաս էյին սպառում,



36050-62

քան Գերմանիայի կամ Անգլիայի բնակիչները (15 և 17 փութ շնչին տարեկան),

2. Տնտեսական այս թշվառ պայմաններում գտնվող Ռուսաստանի կառավարությունը 1914 թ. պատերազմի դաշտը նետվեց: Իսկ յերկարատև պատերազմներում հաղթանակը միշտ տնտեսապես աղա-հովված ու տեխնիքապես զարգացած յերկրին և վերապահվում: Դեռ մինչև պատերազմը Ռուսաստանը աղքատ և պարերաբար կրկնվող քաղցի մի յերկիր էր: Պատերազմի ընթացքում նրա տնտեսությունը վերջնականապես քայքայվեց: 1916 թվից սկսած նվազում և ցանքսի տարածությունը, աշխատանքի կենդանիների մի խոշոր տոկոսը զոհ և զնում պատե-րազմին, յերկաթուղին չի կարողանում նորմալ գոր-ծել, տասնյակ խոշոր գործարաններ դադարեցնում են իրենց արդյունաբերությունը և բանվորներին փողոց շարտում: Տնտեսական քայքայումը և հակաժողովրդա-կան պատերազմը առաջացրին փետրվարյան հեղափո-խությունը:

3. Ժամանակավոր կառավարության խոշորա-գույն հոգսը կազմելու էր ժողովրդական լայն մասա-ների նյութական ապահովումն: Այդ նպատակին հաս-նելու համար անհրաժեշտ էր ամենից առաջ հրաժար-վել պատերազմին մասնակցելուց և լուծել հողային հարցը: Բայց այդ 2 ասպարիզումն էլ ժամանակավոր կառավարությունը շարունակում էր ցարի կառավա-րության քաղաքականությունը, այնպես Վոր նրա 7-ամսյա գոյության ընթացքում Ռուսաստանը տնտե-սապես կատարելապես կործանվեց: Բանվորն ու գյու-ղացին քաղաքական իրավունքներով կեբակրվել չէին կարող և հանուն հացի ու հողի, հանուն պատերազմի վերացման հոկտեմբեր ամսին նրանք մի նոր հեղա-

փոխություն կատարեցին, նպատակ ունենալով յերկրի հարստությունն ու իշխանությունը ամբողջովին ի-րենց ձեռքը վերցնել՝ Ռուսաստանում բանվորագյու-ղացիական դիկտատուրա հաստատել:

4. Այսպիսով, նոր կազմակերպվող խորհրդային իշխանությունը նախորդ կառավարություններից թըշ-վառ ժառանգություն ստացավ՝ կազմալուծված տըն-տեսական ապարատ և շնչին հարստություն: Հին կարգերից ժառանգած այդ վողորմելի միջոցներով էր, Վոր բանվորագյուղացիական իշխանությունը նյութա-կան առնելի պայմանների մեջ էր դնելու Ֆրոնտից վերադարձող բազմամիլիոն զորքը, քաղցած գյուղա-ցիությունը և գործազուրկ բանվորությունը:

5. Ամեն մի հեղափոխության հիմքն ու գլխավոր նպատակը տնտեսական հեղափոխության մեջ է կա-յանում: Իշխանությունը իր ձեռքը վերցրած պրոլե-տարիատը տնտեսական ասպարիզում կարող էր միայն սոցիալիստական հեղափոխություն կատարել, այ-սինքն—առաջին հերթին—ազգայնացման յենթաբեկ հողը և արդյունաբերության ու փոխանակության բո-լոր խոշոր միջոցները (մեքենաներով աշխատող գոր-ծարանները, հանքային հարստությունները, բանկերը և այլն): Ընդհանրապես դասակարգերին ու ժառանգա-նակներին և սոցիալիստական—կոմունիստական կարգերի հիմքը դնելու համար աղքատնայման քաղաքականու-թյունը հիշյալ շրջանակներում կատարյալ անհրա-ժեշտություն էր: Հակառակ դեպքում, բանվորագյու-ղացիական իշխանությունը գոյություն հիմք չէր ու-նենա:

6. 1918 թ. առաջին կիսում խորհրդային իշխա-նությունը մտադիր էր այսքանով բավականանալ և ծրագրում էր կիրառել մոտավորապես այն քաղաքա-կանությունը, Վոր այսօր նոր տնտեսական քաղա-

քականություն ենք կոչում: (Պարենտալքին վերաբերյալ էր գրքուկը ընկ. Լենինը 1913 թ. և կազմել):

7. Խորհրդային իշխանությունը տապալելու նպատակով կալվածատերերն ու գործարանատերերը ուժեղ հակահեղափոխական շարժում են կազմակերպում: Կոիվը հակահեղափոխության դեմ ստիպում է խորհրդային իշխանությանը տնտեսական քաղաքականության այն յեղանակին դիմել, վոր նա վարում էր մինչև 1920 թվի վերջը:

8. Հակահեղափոխության գլուխ ելին կանգնած խոշոր կալվածատերերն ու գործարանատերը, բայց նրանց ուժը կազմում էին միջակ և մասամբ մանր հողատերերն ու գործարանատերերը: Հեղափոխության հաղթանակը պահանջում էր վերջիններիս ել սեփականությունից անել, վորպեսզի այդ ձանապարհով նրանք զրկված լինեն հակահեղափոխական կուլի գլուխավոր գործիքից—իրենց նյութական հարստությունից: Նման քաղաքականությունը վոչ պակաս չափով անհրաժեշտ էր և այն պատճառով, վոր այլ կերպ խորհրդային իշխանությունը միջոց չէր ունենա կազմակերպելու կարմիր բանակը և ծածկելու հեղափոխական կուլի անազին ծախսերը:

9. Ռուսաստանի գյուղացիությունը յերկու և կես դար շարունակ կուվել էր հանուն իր հողի, բայց անհաջող: Հոկտեմբերյան հեղափոխություն շնորհիվ էր միայն, վոր գյուղացիությունն ստացավ իր ամբողջ հողը, նրա հետ միասին և իր խորհրդային իշխանությունը: Հանուն այդ հողի և նոր իշխանության պահպանման նա իր հացով պեսք է կերակրել թե հինգ միլիոնանոց կարմիր բանակը և թե քաղաքի բանվորությունն ու խորհրդային ծառայողներին: Հաց գնելու միջոցներից զուրկ լինելով, խորհրդային իշխանությունը դիմում է հացի այսպիսի կոչված ռուգ-

վյորստեղային: Այլ կերպ խորհրդային իշխանությունը զուրկ կլիներ հեղափոխական կոիվը կազմակերպելու և նրա հաջողությունն ապահովելու ամեն մեկ հնարավորությունից, իսկ գյուղացին նորից կզրկվեր թե հողից և թե ազատությունից:

10. 1918—1920 թվականների ընթացքում վարած այս տնտեսական քաղաքականությունը շնորհիվ էր, վոր խորհրդային իշխանությունը հաջողվեց ներքին և արտաքին հակահեղափոխության հանդեպ այնքան վճռական ու մեծ հաղթանակ տանել:

11. Բայց հեղափոխության այդ հաղթանակը չափազանց ծանր դնով ձեռք բերվեց: Հիշյալ ժամանակամիջոցում խորհրդային իշխանության ամբողջ ուժը, նրա բոլոր միջոցները նվիրված էին հակահեղափոխության դեմ մղվող կուվին, այնպես վոր ստեղծագործական տնտեսական աշխատանք կատարելու համար շատ քիչ հնարավորություն էր մնում:

12. Հացի «ռազվյորստեղան» չափազանց ծանր հետևանքներ ունեցավ: Գյուղացին հրաժարվում է մշակել և ցանել իր ամբողջ հողաբաժինը, վորովհետև նրա բերքի ավելցուկը ձրիաբար պետություն էր անցնում: 1920—1921 տարիների ընթացքում խորհրդային Ռուսաստանը իր հողից մոտ յերկու անգամ պակաս բերք է ստացել, քան 1913 թվին: Հողագործության նման ծանր դրությունը գլխավոր պատճառներից մեկը հացի «ռազվյորստեղան» և հանդիսանում:

13. Հակահեղափոխության դեմ հաջող կոիվ մղելու նպատակով խորհրդային իշխանությունը աղքատացրել էր հազարավոր միջակ ու մանր արդյունաբերական ձեռնարկություններ, վորոնց մեծամասնությունը նա ոգտագործել էր կարող, չունենալով վոչ համապատասխան կազմակերպչական ու տեխնիքական ուժեր և վոչ դրա համար անհրաժեշտ կապիտալները:

Այդ ձեռնարկութիւնների ազգայնացումը դրկում եր-
խորհրդային իշխանութեանը հնարավորութիւնից՝ իր-
բոլոր անխնայական, նյութական ու կազմակերպչա-
կան ուժերը խոշոր ձեռնարկութիւնների շուրջը կենտ-
րոնացնելու: Գործարանային արդյունաբերութիւնը
ավելի ուժեղ անկման հասած, քան այդ հողագործու-
թյան մեջ անդի ունեւր:

14. Հողագործութեան և գործարանային արդյու-
նաբերութեան այդ ծանր վիճակը անասելի չափերով
իջեցրեց գրամի կուրսը:

15. 1920 թ. վերջերին հակահեղափոխական գըլ-
խավոր ուժերը վերջնականապէս ջախջախւած էին:
Այլեւս գլուխը չունեւին այն պայմանները, վո-
թեկադրում էին հացի «ռազվարստկայի» և միջակ ու-
մանը ձեռնարկութիւնների ազգայնացման անհրաժեշ-
տութիւնը: Հեղափոխութեան կառուրյալ հաղթանակը
խորհրդային իշխանութեան համար հնարավորութիւն
ստեղծեց՝ կիրառելու այն տնտեսական քաղաքականու-
թիւնը, վորը ծրագրւում եր դեռ 1918 թվի գարնա-
նը: Հակահեղափոխութիւնը ջախջախելուց հետո խոր-
հրդային իշխանութեան առաջ կանգնած խոշորագոյն
խնդիրն եր՝ վերականգնել յերկրի տնտեսութիւնը,
բանվորի և գյուղացու դրութիւնը բարվոքել:

16. Յերկրի ազգաբնակչւթյան յերեք քառորդը
գյուղացիութիւնն է կազմում: Դեռ կյանքի նորմալ
պայմաններում Ռուսաստանի տարեկան յեկամտի մոտ-
յերկու յերրորդը նույն գյուղացիութեան աշխատան-
քից եր ստացւում: Յերկրի տնտեսութիւնը վերա-
կանգնելու ամեն մի քայլ կարելի եր միմիայն գյու-
ղատնտեսութիւնից սկսել, վորը բանվորին սնունդ ե-
մատակարարում, գործարանին—հում նյութ: Անկախ
այդ հանգամանքից, գյուղացու դրութեան բարվոքումը
չափազանց կարեւոր քաղաքական նշանակութիւն ու-

նի: Խորհրդային իշխանութեան և բանվոր դասակար-
գի վարած քաղաքականութիւնը պաշտպանութիւն
կարող ե գտնել միայն տնտեսապէս ապահով գյու-
ղացիութեան կողմից: Քաղցած ու դժգոհ գյուղացիու-
թիւնը խորհրդային իշխանութեան գոյութեան համար
մի ուժեղ սպառնալիք ե, մանավանդ վոր այդ գյուղա-
ցիութիւնը յերկրի բնակչութեան 75 տոկոսն է կազ-
մում: Խորհրդային իշխանութիւնը չի կարող հենվել
միայն սվիտների վրա: Նա այն չափով միայն ուժեղ
ե և իր վտաքի տակ հող ունի, ինչ չափով ազգաբնա-
կութեան մեծամասնութիւնը նրա քաղաքականութեան
գլխավոր պաշտանն և հանդիսանում: Նման հուսեր
քաղցած գյուղացիութեան վրա չեր կարելի դնել:

Վերոհիշյալ տնտեսական և քաղաքական պայման-
ները թելադրում էին խորհրդային իշխանութեանը
ձեռք առնել ամեն մի միջոց, վարպետի գյուղացին
բանվորին դաշնակից դառնա, խորհրդային իշխանու-
թիւնն իր սեփական իշխանութիւնը համարի և նը-
բան իր ամբողջ ուժով պաշտպանի:

17. Յերկրի տնտեսութիւնը վերականգնելու,
գյուղացիութիւնը հակահեղափոխական բանակից
վերջնականապէս դատելու և նրան խորհրդային իշխա-
նութեան հետ ամուր թելերով կապելու համար ան-
հրաժեշտ եր վերացնել հացի «ռազվարստկան»:
1921 թվի սկզբից նա փոխարինվեց պարեն-
աւորքով, վորը յերաշխավորում և գյուղացուն նրա
ամբողջ բերքը և նրան դրում՝ մշակելու իր ամբողջ
հողամասը, նրա վրա աշխատանք թափելու և ծախս
անելու: Պարենաւորքը գյուղացուն նյութապէս շահա-
գրողում, նրա մեջ տնտեսական ձեռնբերցութիւն ե
առաջացնում: Պարենաւորքին վերաբերյալ բոլոր դեկ-
րեմները տուրքի ամբողջ ծանրութիւնը ունեւր գյու-
ղացիութեան վրա յեն դնում, չունեւր գյուղացիու-

թյան վրա ընկնելից տուրքերը նվազագույն չափի հասցնելով կամ նրան այդ տուրքից բոլորովին ազատելով: Հողի ազգայնացումն անսասան պահպանելով, հողագործության յեղանակների ընտրության գործում գյուղացուն լայն ազատություն է տրվում: Ժամանակավորապես թույլատրվում է և հողի կապալը: Խորհրդային իշխանությունը իր արամադրության տակ յեղած բոլոր միջոցներով չունենոր գյուղացիությանը ազնություն և հասնում և դարկ աալիս նրա տնտեսություններին:

18. Բայց հացի «ռազվոթոստայի» վերացումն և նրա փոխարինումն պարենտուրքով դեռ բավական չեն, վորպեսզի գյուղացին իր ամբողջ դաշտը ցանի: Գյուղացուն պետք է հնարավորություն տալ իր հացի և այլ գյուղատնտեսական մթերքների ավելցուկը շուկա հանել և նպաստավոր պայմաններով փոխանակություն կատարել կամ վաճառել: Մինչև 1921 թվի սկիզբը խորհրդային հանրապետություններում ազատ առևտուր չկար, ինքը խորհրդային իշխանությունն էլ չունեիր այնքան ապրանք ու դրամ, վոր կարողանար իր պահեստներից բավարարել գյուղացիության բոլոր պահանջները և ձեռք բերել նրա շուկա հանած բոլոր մթերքները: Տնտեսական կյանքի վերակենդանում, վորը խորհրդային իշխանության ամրապնդման գլխավոր նախապայմանն է կազմում, հրամայորեն պահանջում էր յերկրում ազատ առևտուր հաստատելու:

19. Պարենտուրքը առևտրի ազատություն առաջացրեց: Բայց վորպեսզի գյուղի և քաղաքի մեջ ապրանքային փոխանակության նորմալ պայմաններ հաստատվեն, վաճառականների տրամադրության տակ գյուղացուն հարկավոր ապրանքներ պետք է լինեն: 1921 թվի սկզբին գործարանային արդյունաբերությունը նշանավոր չափերով նվազել ու հաճախ հա-

մարյա դադարել էր: Հակահեղափոխական վտանգի վերացումը հնարավոր էր դարձնում այդ ապարիզում ել մի շարք փոփոխումներ մտցնել:

20. Գործարանային արդյունաբերության հիմքը խոշոր ձեռնարկություններն են կազմում: Վերջիններս տեխնիքապես ավելի լավ են կահավորված, քան միջակ ու մանր ձեռնարկությունները: Նրանց մեջ աշխատող բանվորներն ել ավելի բարձր տեխնիկական ու պրոֆեսիոնալ պատրաստականություն ունեն և կատարելագործված գործիքների ու մեքենաների վրա աշխատելով, յերկրին ավելի ոգուտ են բերում, քան մանր ու միջակ ձեռնարկությունների բանվորները: Դրա վրա պետք է ավելացնել և այն հանգամանքը, վոր խոշոր գործարանների բանվորները ամենադիտակից, քաղաքական դիտակցությամբ ոժտված, դասակարգային հողի վրա կանգնած և խորհրդային իշխանության լավագույն պաշտպան հանդիսացող բանվորներն են: Այդ ձեռնարկությունների շահագործումը կենտրոնական իշխանության համար ավելի շահավետ է և նրանց կառավարումը ավելի հեշտ, քան այդ մանր ու միջակ ձեռնարկությունների վերաբերմամբ գոյություն ունի: Վերոհիշյալն ի նկատի առնելով, խորհրդային իշխանությունն իր ձեռքումն է թողնում խոշոր ձեռնարկությունները և նրանց պետական ուժերով շահագործում:

21. Մանր ու միջակ ձեռնարկությունները դուրկ են խոշոր ձեռնարկություններին հատուկ այն բոլոր առավելություններից, վորոնց մասին խոսվեց նախորդ կետում: Նրանց շահագործումը կառավարության համար թե դժվար է և թե վոչ շահավետ: Ներանցից շատերը չեն կարող ծածկել նույն իսկ վարչության և հսկողության համար պահանջվելիք ծախսերը: Բայց նրանց գոյությունն անհրաժեշտ է թե

յերկրի ընդհանուր տնտեսական առաջադիմության և թիւ խոշոր արդյունաբերության զարգացման համար: Ահա ինչու խորհրդային իշխանութիւնը հրաժարւում է այդ տեսակի ձեռնարկութիւնները սկսական ուժերով շահագործելուց և նրանց կամ նախկին տերերին և վերագարձնում կամ կապալով տալիս:

22. Միջակ ու խոշոր արդյունաբերության մեջ յեղած ահագին տարբերութիւնը յույց տալու համար բավական է նկատի առնել, վոր խորհրդային Ռուսաստանի 500-ից ավելի բանվոր ունեցող 829 խոշոր գործարաններում (5 տոկոս) պատերազմի նախորդական աշխատում էր 1.145.141 բանվոր (530/0), այնինչ 16.527 միջակ ու մանր ձեռնարկութիւններում (95 տոկոս), վորոնցից ամեն մեկը ունէր մինչև 500 բանվոր, աշխատում էր 1.005.050 բանվոր (470/0):

23. Ներկայումս, միջազգային կապիտալի գոյութեան շրջանում, առևտուրը հնարվոր է միայն զբաղման միջոցով, Բայց գյուղացին իր մթերքը քաղաք չի բերի, յեթե դրամը ամուր կուրս չունի: Գյուղացին, վորը 1921 թվի սկզբին յեթե Յերևան բերեր 100 գրվ. հաց, այդ վաճառումից ստացած դրամով 1922 թվի սկզբին հաղիւ կէս գրվ. հաց կդներ: Նման ֆինանսական սլայմաններում փոխանակութիւնը գյուղի և քաղաքի մեջ անհնարին է դառնում և գյուղատնտեսութեան առաջամիջութեան վրա մեծ հուշեր դնել չի կարելի: Ահա ինչու նախորդ կետերում հիշված փոփոխումները մեր տնտեսական քաղաքականութեան մեջ անհրաժեշտութիւն են դարձնում և բոլորովին նոր ֆինանսական քաղաքականութիւնը: Պետք է դրամի ամուր և տեղական կուրս հաստատել, այսինքն վոսկյա վալյուտային անցներ: Միաժամանակ բոլոր խորհրդային հիմնարկութիւնները պետք է իրենց ծախսերը սահմանափա-

կեն, իրենց գործունեութիւնը վորոշ բուջետային շրջանակի մեջ դնեն: Խորհրդային իշխանութիւնը չի կարող իր բոլոր ծառայութիւնները առաջվա նման ձրիաբար կատարել: Առևտրի և գործարանային արդյունաբերութեան ազատութիւնը թելադրում է նաեւ մի շարք հարկերի հաստատումն և վարկային հիմնարկութիւնների կազմակերպումն:

24. Յերկրագործութեան, գործարանային արդյունաբերութեան և փոխանակութեան հաջող ընթացքը պահանջում է, վոր մեր տնտեսական կյանքի այդ բոլոր ասպարեզներում արտիւ ու անմշական մասնակցութիւն ունենա ինքը կազմակերպված մասսան՝ հանձինս արտադրողական և սպառողական կոոպերատիւների, վորոնցով պետք է ծածկել բոլոր խորհրդային յերկրները:

25. Արդյունաբերական և առևտրական դասակարգերին տված վերոհիշյալ ազատութիւնները չը պետք է ընդունել վորպէս հրաժարական կոմունիստական տնտեսութիւն կազմակերպելուց: Ընդհակառակը, իր նոր տնտեսական քաղաքականութիւնով խորհրդային իշխանութիւնը ձգտում է վերականգնել տնտեսական կյանքը, դարկ տալ արտադրողական ուժերի զարգացմանը, բարելավել բանվորի ու աշխատավոր գյուղացու դրութիւնը և ամրապնդել բանվորագյուղացիական դիկտատուրան: Այսոր էլ յերկրի գլըխավոր, պայմանավորող դեր կատարող հարստութիւնը—հողը, հանքերը, խոշոր արդյունաբերութիւնը, յերկաթուղին, ֆինանսական գործը, արտաքին առևտուրը—Խորհրդային իշխանութեան ձեռքումն է գտնվում: Հենվելով նյութապիս ապահով բանվորի և գյուղացու, ինչպէս և իր հարմիր Բանակի վրա, խորհրդային իշխանութիւնը տարեցտարի ընդարձակելու է պետական արդյունաբերութեան շրջանակնե-

ըր, մասնավոր ձեռնարկողների դեմ մրցման մեջ մտնելով: Բանվորագլուղացիական իշխանության ուժից, կոմունիստական կուսակցութեան և արհեստակցական միությունների հեռապես քաղաքականութունից և բանվոր դասակարգի ու չունեւոր գյուղացիութեան աշխատանքի չափից և կախված, թե մրցման այս ասպարիզում հեղափոխական մասսաները կապիտալիստական դասակարգերի հանդեպ ինչ հաջողություն կունենան, ինչ նոր հաղթանակներ կտանեն:

26. Կապիտալիստական հասարակարգում վոչ մի յերկիր յերկար տարիների ընթացքում չի կարող անկախ տնտեսական կյանք վարել: Համաշխարհային շուկայից կարված լինելը մանավանդ ծանր և խորհրդային յերկրների համար: Դեռ մինչև համաշխարհային պատերազմը նրանք տնտեսապես հետամնաց եյին և առաջնակարգ կապիտալիստական յերկրներից ուժեղ տեխնիքական ու ֆինանսական կախման մեջ եյին գտնվում: Համաշխարհային պատերազմը և քաղաքացիական կռիւները խորհրդային յերկրների առանց այն ել թույլ տնտեսութեանը և տեխնիկային չափազանց ծանր հարված հասցրին: Պետք և նկատի առնել, վոր մինչև պատերազմը խորհրդային յերկրների գյուղատնտեսական գործիքների և մեքենաների մաս կեսն ել առաջնակարգ կապիտալիստական յերկրներից եր ստացվում: Առանց ոտար կապիտալի և առաց արտասահմանյան գործիքների ու մեքենաների ներմուծման խորհրդային յերկրների թե գործարանային արդյունաբերութեան և թե յերկրագործութեան վերանորոգումն խոշոր դժվարութեանների և հաճախ անհաղթելի խոչնդոտների կհանդիպի:

27. Միջազգային բուրժուազիան ձգտում եր բռնի ուժով խեղդել բանվորագլուղացիական հեղափոխութեանը, բայց ստիպված եր նահանջել և խոր-

հըրդային հանրապետութեանների գոյութեան վատթի հետ հաշտվել: Խորհրդային յերկրների շուկան և նրանցից արտահանվող հում նյութերը մի շարք կապիտալիստական յերկրների տնտեսական առաջադիմութեան գլխավոր պայմաններից մեկն և հանգիստնում: Բանվորագլուղացիական իշխանութեան խոշոր պատմական հաղթանակը ստիպեց բուրժուական կառավարութեաններին հրաժարվել այն մտքից, վոր Ռուսաստանը կարելի յե իրենց համար մի դադութ դարձնել և նրանք մի շարք տնտեսական և քաղաքական հարցերի շուրջը խորհրդային իշխանութեան հետ այսոր բանակցութեաններ ևն վարում: Զենովայի կոնֆերանսի հրավիրման փաստը հոկտեմբերյան հեղափոխութեան միջազգային հաղթանակի անժխտելի ապացույցն և հանդիսանում: 1922 թվի ընթացքում մի քանի կապիտալիստական յերկրներ Խորհրդային Ռուսաստանի հետ առևտրական պայմանագրեր կընքեցին:

Խորհրդային հանրապետութեանների տնտեսական առաջադիմումը առանց խոշոր կապիտալիստական ու ֆինանսական ոգնութեան նույնքան դժվար ե, ինչքան և կապիտալիստական յերկրների տնտեսական առաջադիմումն առանց խորհրդային հանրապետութեանների շուկայի և նրանց հում նյութերի:

28. Խորհրդային յերկրները ունեն մեծ տարածութեամբ անտառներ ու հողեր, վոր չեն կարողանում մշակել, ունեն բազմաթիւ մետաղի հանքեր և այլ բնական հարստութեաններ, վոր չեն կարողանում ոգտագործել, դուրկ լինելով դրա համար պահանջվող ֆինանսական ու տեխնիքական միջոցներից: Կապիտալիստական յերկրներում ազատ կապիտալներ կան: Վորոշ պայմաններում նրանք պատրաստ են խորհր-

դային յերկրները տեղափոխվել և նրանց բնական հարստութիւնները բեղմնավորել:

Ինչքան վոր այդ կապիտալների տերերը ընդունում են խորհրդային իշխանութիւնը և նրա որոշումներին յենթարկվում, չի կարելի չընդունել նրանց առաջարկները և նրանց թույլ չտալ՝ մշակելու մեր բնական հարստութիւնները: Նրանց հետ պետք է կապվել կոնցեսիոն և կապալի պայմաններով, նրանց գործունեութեան նպաստավոր պայմանների մեջ դնել և այդ միջոցով ավելացնել խորհրդային յերկրների հարստութիւնը:

29. Ոտար յերկրների կապիտալների, մեքենաների, գործիքների և հարյուրավոր ապրանքների ներմուծումը պահանջում է, վոր խորհրդային իշխանութիւնը կապիտալիստական յերկրների հետ առետրաարդյուրաբերական պայմանագրեր ու համաձայնութիւններ կազմի, ինչքան վոր այդ հարաբերութիւնները չեն թուլացնում բանվորա-գյուղացիական զիլատաււրան: Այդ բանակցութիւնների ժամանակ հնարավոր են վորոշ զիջումներ տնտեսական ասպարիզում, բայց վոչ մի զիջում, վորը քաղաքական բնույթ կրեր և դեպի բանվորա-գյուղացիական իշխանութեան թուլացումն ուղղված լիներ:

30. Նոր տնտեսական քաղաքականութիւնը վերջնականապէս քայքայեց հակահեղափոխութեան շարքերը, զրկելով նրան ամեն մի հնարավորութիւնից՝ իր կողմը գրավելու գյուղացիութեան և քաղաքի մանր բուրժուազիայի այն խավերը, վորոնք մինչ այդ նյութական ծանր դրութիւնից ստիպված, հակահեղափոխութեանը կարող էին վորոշ աջակցութիւն ցույց տալ:

Նոր տնտեսական քաղաքականութիւնը գյուղա-

ցուն բաղամթիվ թելերով կապեց խորհրդային իշխանութեան հետ և բանվորա-գյուղացիական համերաշխութեանն ու միութիւնն ավելի ամուր հիմունքների վրա դրեց: Այդ քաղաքականութեան հետեանքով եւ վոր խորհրդային յերկրների ազգայնակշիւթեան ճշնշող մեծամասնութիւնը վերջնականապէս խորհրդային իշխանութ. կողմնակից ու պաշտպան դարձավ, համոզվելով, վոր իր քաղաքական անկախութիւնը, իր տնտեսական ու բարոյական առաջադիմութիւնը, իր աշխատանքի անխախտ ու խաղաղ պայմանները վոչ մի իշխանութիւն այնքան հաջողութեամբ ու այնպիսի հետեողականութեամբ պաշտպանել չի կարող, ինչպէս խորհրդային իշխանութիւնը, այսինքն նույն աշխատավոր մասսաների իշխանութիւնը:

Նոր տնտեսական քաղաքականութիւնը վերականգնում է խորհրդային յերկրների տնտեսութեանը, բոլոր ձեռներեց ուժերին շինարարական աշխատանքի հրավիրում և բանվորի ու գյուղացու դրութիւնը նյութապէս ապահովում:

Տնտեսական առաջադիմութեան պայմաններում ապրող և նյութապէս ապահով բանվորն ու գյուղացին, ձեռք ձեռքի տված նույնպէս ապահով կարմիր զինվորին, խորհրդային հանրապետութիւններում կամրացնեն բանվորա-գյուղացիական զիլատաււրան, դեն կշարտեն ամեն մի վտանգութիւն հակահեղափոխականների կողմից և կաշխատեն չեզոքացնել նոր տնտեսական քաղաքականութիւնից առաջացող ամեն մի բացասական յերևույթ:

Բուրժուազիայի հանգեպ քաղաղացիական պատերազմի դաշտում հաղթանակ տարած բանվորն ու գյուղացին տնտեսական նոր քաղաքականութեան պայմաններում պետք է ապացուցեն, վոր բուրժուա-

զեային նրանք զերազանցում են և իրենց շինարար-
ստեղծագործական ընդունակութուններով՝ կյանքի թե-
տնտեսական և թե ընդհանուր կուլտուրական ասպա-
րեզներում:

Խորհրդային հանրապետութիւնների բանվորնե-
ռւ գյուղացին տնտեսական մրցման այս կռիւլը մղե-
լու յեն նաև համաշխարհային բուրժուազիայի դեմ:
Խորհրդային յերկրների պարտութիւնն այս ասպարի-
զում անմիջապէս նրանց քաղաքական դրութեան վրա
կանդրադառնա: Ահա ինչու խորհրդային յերկրներէ
բանվորութիւնը պետք է միջոց ձեռք առնե, վորպես-
զի կապիտալիստական յերկրների հետ տնտեսական
համաձայնութիւններ կալացնելու գործում Յևրոպայի
և Ամերիկայի պրոլետարիատը նրան աջակցութիւն
ցույց տա:

Խորհրդային յերկրների վարած նոր տնտեսական
քաղաքականութիւնը միջազգային հարաբերութիւն-
ների պատմութեան մեջ ել մի բոլորովին նոր եջ է
բացում:

Այդ քաղաքականութիւնը խորհրդային իշխա-
նութեան համար ժամանակավոր բնույթ է կրում—
մինչև համաշխարհային պրոլետարական հեղափոխու-
թեան բռնկումը: Վերջինիս շնորհիւ է միայն, վոր
ներիայիս խորհրդային հանրապետութիւնները կա-
ղատվեն կապիտալիստական դասակարգերի հետ հա-
մաձայնութեան գալու ծանր անհրաժեշտութիւնից:

Թե ներկայիս «նոր» տնտեսական քաղաքակա-
նութեան հաջողութիւնը և թե պրոլետարիատի վերջ-
նական ազատագրումը—մեր կոմունիստական հեղա-
փոխութիւնը—ամբողջ աշխարհի պրոլետարիատից
պահանջում են՝ մի ընդհանուր հեղափոխական պրոլե-
տարական ճակատ կազմակերպելու և ուղղած ամբողջ
աշխարհի բուրժուազիայի դեմ:

<< Ազգային գրադարան



NL0193901

24

32.137